

## Համաշխարհային հմտություններ միջազգային կազմակերպության անդամակցությունը

### Կարող ե՞ք ձեռնպահ մնալ ՀՀՄԿ-ին անդամակցելուց

#### 1. Ի՞նչ է Համաշխարհային հմտություններ միջազգային կազմակերպությունը

ՀՀՄԿ-ն եզակի, շահույթ չհետապնդող, միջազգային անդամակցությամբ կազմակերպություն է, որի առաքելությունն է բարձրացնել մասնագիտական կրթության և ուսուցման կարգավիճակը աշխարհում: Դրա հիմնական գործունեությունն է կազմակերպել ՀՀՄԿ մրցույթներ, տարբեր անդամ երկրներում, երկու տարին մեկ անգամ:

Ներկայումս ՀՀՄԿ-ն ունի անդամներ 61 երկրներում/տարածաշրջաններում և ձգտում է ընդլայնման: Այն նպատակ ունի մինչև 2020թ-ը իր անդամների քանակը հասցնել 70-ի, նախատեսելով տարածել բարձրակարգ հմտություններ՝ աշխարհի տարբեր տարածաշրջաններում:

#### 2. Ովքե՞ր են ՀՀՄԿ անդամները

Նրանք գործակալություններ և հաստատություններ են, որոնք պատասխանատու են իրենց երկրներում/տարածաշրջաններում մասնագիտական կրթությունը և ուսուցումը խթանելու համար: Որպես կանոն, յուրաքանչյուր երկրից/տարածաշրջանից միայն մեկ հաստատություն կարող է ճանաչվել որպես անդամ կամ թղթակից անդամ:

Անդամը ներկայացվում է ՀՀՄԿ-ում պաշտոնատար անձի կամ տեխնիկական պատվիրակի կողմից, որոնց նշանակում է անդամ հաստատությունը: Յուրաքանչյուր անդամ ՀՀՄԿ ընդհանուր ժողովում ունի մեկ ձայն:

Ծանոթություն. «Գործակալություն, որը ներկայացնում է կրթական համակարգ» կարող է լինել հասարակական կազմակերպություն, որը հիմնադրվել է ՀՀՄԿ անդամ կազմակերպություն դառնալու համար: Այս դեպքում անհրաժեշտություն կառաջանա փաստելու, որ հասարակական կազմակերպությունն ունի տվյալ երկրի/տարածաշրջանի կրթական համակարգի հիմնական բաժնետերերի օժանդակությունը (օրինակ՝ կառավարություն և արդյունաբերություն):

### **3. Ո՞րն է անդամի և թղթակից անդամի տարբերությունը**

Թղթակից անդամներն ունեն լիիրավ անդամակցության բոլոր արտոնությունները, բացառությամբ քվեարկելու և ընտրություններին մասնակցելու իրավունքը, նաև նրանք չեն կարող մասնակցել որևէ պաշտոնական թիմով, երկու տարին մեկ անգամ կազմակերպվող մրցույթում: Սակայն թղթակից անդամները կարող են հրավիրվել մրցույթին ներկայացնելու մեկ կամ երկու «հյուր» մրցակիցներ, նպատակ հետապնդելով տեղեկություններ ստանալ մրցույթի վերաբերյալ: Հյուր մրցակիցների արդյունքները պաշտոնապես չեն ճանաչվում և մեղալներ չեն շնորհվում: Թղթակից անդամների վարձավճարներն ավելի քիչ են, քան լիիրավ անդամներինը և նրանց խրախուսվում է մտածել լիիրավ անդամության մասին՝ կազմակերպությանը ծանոթանալուց հետո:

### **4. Որո՞նք են անդամության վճարները**

#### **4.1 Լիիրավ Անդամ**

Գոյություն ունի ընդունման վարձավճար (մեկանգամյա վճարում) և տարեկան վարձավճար (տարեկան վճարում): Ընդունման վարձավճարը կազմում է 26.000 եվրո և ենթակա է վճարման անդամ դառնալուց հետո, 30 օրվա ընթացքում:

Տարեկան վարձավճարը տատանվում է՝ կապված վարձավճարի ֆորմուլայի կիրառումից (տարեկան նվազագույն վճարը կազմում է 5.400 եվրո): Առաջին տարվա համար տարեկան վարձավճար չկա, քանի որ այն ներառված է ընդունման վարձավճարի մեջ:

#### **4.2 Թղթակից անդամ**

Ընդունման վարձավճար չկա: Տարեկան վարձավճարը կազմում է 2.800 եվրո: Երբ թղթակից անդամը դառնում է լիիրավ անդամ, նախկինում վճարված բոլոր տարեկան վարձավճարները (առավելագույնը մինչև 8.400 եվրո) հանվում են ընդունման վարձավճարից:

## 5. Ինչպե՞ս է գործակալությունը կամ հաստատությունը դիմում անդամակցության համար

Դիմումները պետք է լինեն գրավոր, դիմող կազմակերպության պաշտոնական բլանկի վրա, հասցեագրված ՀՀՄԿ գործադիր տնօրենին և ստորագրված տվյալ հաստատության պաշտոնական ներկայացուցիչների կողմից:

Դիմումը պետք է ներառի՝

- տվյալ երկրի/տարածաշրջանի մասնագիտական կրթության և ուսուցման համակարգում դիմող մարմնի գրադեցրած պաշտոնի նկարագիրը
- նշանակված պաշտոնատար անձի և տեխնիկական պատվիրակների անունները, պաշտոնները և կոնտակտային հասցեները
- ընդունման վարձավճարի վճարման երաշխիք՝ դիմումի ընդունումը գրավոր հաստատելուց հետո, 30 օրվա ընթացքում
- ՀՀՄԿ սահմանադրության, գործող կանոնակարգերի և մրցույթի կանոնների ստորագրված պատճենները (Ծանոթություն: այս փաստաթղթերը կարող են ներբեռնվել ՀՀՄԿ [www.worldskills.org](http://www.worldskills.org) ինտերնետային կայքից)

## 6. Ո՞վ է որոշում կայացնում անդամակցության դիմումի համար

ՀՀՄԿ տնօրենների խորհուրդը քննարկում է դիմումը և պայմանավորվում հանդիպել դիմող մարմնի ներկայացուցչի հետ՝ քննարկելու համար ՀՀՄԿ-ին անդամակցելու հարցերը:

Տնօրենների խորհրդի կողմից դիմումն ընդունելուց հետո, այդ մասին գրավոր տեղեկացվում են դիմողը և բոլոր անդամները:

Նոր անդամի ընդունումը պետք է պաշտոնապես հաստատվի ընդհանուր ժողովի հաջորդ նիստում, որի ընթացքում ներկայացվում է անդամության վկայական և նոր անդամին հնարավորություն է տրվում ներկայացնել իր պատվիրակներին և համառոտ նկարագրել կրթական համակարգը, որը նա ներկայացնում է:

## Հղումներ

ՀՀՄԿ սահմանադրություն. հոդված 4, 4.1-4.6

ՀՀՄԿ գործող կանոնակարգեր. 6.1 և 6.2

Լրացուցիչ տեղեկատվության համար կարող եք դիմել ՀՀՄԿ քարտուղարություն

Համաշխարհային Հմտություններ Միջազգային Կազմակերպություն

Կայզերսգրախտ 62-64,  
1015 CS Ամստերդամ,  
Նիդեռլանդներ  
Հեռ: +31 23 5311071  
Ֆաքս: +31 23 5310816  
[secretariat@worldskills.org](mailto:secretariat@worldskills.org)  
[www.worldskills.org](http://www.worldskills.org)